

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ**

21 Յուլիս, 2023-ին, յետ Երեկոյեան Ժամերգութեան եւ նախատօնակի, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Մասնաւոր Վարդապետութեան չորս աստիճաններ տրուեցան Սրբոց Յակոբեանց Միաբանական Ուխտի երկու Հոգեշնորհ Հայրերու՝ Տ. Վազգէն Աբեղայ Ալէքեանի եւ Տ. Տիրան Աբեղայ Յակոբեանի:

Հայց. Եկեղեցւոյ «վարդապետ»-ը սկզբնական ժամանակներէն սկսեալ, միշտ ունեցած է եկեղեցական գլխաւոր առաքելութիւն եւ քարոզելու եւ ուսուցանելու պաշտօն: Եւ անշուշտ, այս առաքելութիւնը շատ լուրջ պարտաւորութիւններ կ'ենթադրէ՝ ուսումնական եւ գիտական, նկարագիր եւ առաքինութիւններ, հաւատքի կրակը դնելով իրենց ուսումին եւ ամբարուած գիտութեան մէջ: Այսպէս ընդունուած է հայ «վարդապետ»-ին եկեղեցական տիպարը:

Յետ Յիշատակ Տապանակին Հնոյ եւ Տօն Նորոյս Ս. Եկեղեցւոյ նախատօնակի, Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեան սարկաւազներու եւ հոգեւորականներու թափօրով փոքր ատեանէն շարականի երգեցողութեամբ առաջնորդուեցաւ դէպի Մայր տաճարի դուռը եւ բազմեցաւ Աթոռին:

Ընծայեալները կը ներկայացնէր Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշ. Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեան:

Արարողութեան մասնակից խարտաւիլակն էր՝ Հոգշ. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեան:

Պատրիարք Սրբազան Հայրը յատուկ աղօթքներու ընթերցումով Մասնաւոր Վարդապետութեան չորս աստիճաններ շնորհեց Տ. Վազգէն Աբեղայ Ալէքեանի եւ Տ. Տիրան Աբեղայ Յակոբեանի:



ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ****Տ. ՎԱԶԳԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼԷՔԵԱՆԻ**

Աւագանի անունով Աւետիք, ծնած է 9 Յուլիս, 1980-ին յերեւան: Զաւակն է Սլաւիկ եւ Կարինէ Ալէքեաններու:

1986-էն 1997 նախնական կրթութիւնը ստացած է Երեւանի թիւ 106 միջնակարգ դպրոցին մէջ: 1997-էն 1998 ուսանած է Շիրակի թեմին հոգեւոր ճեմարանին մէջ:

1998-ին ծառայած է Փարաքարի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ:

1998-ին ընդունուած է որպէս ուսանող Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Ժառանգաւորաց վարժարանէն ներս, որուն ընթացքն աւարտելէն յետոյ 2003-ին ձեռնադրուած է Սարկաւագ, ձեռամբ՝ երջանակյիշատակ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի:

2006-ին աւարտած է Ընծայարանի եռամեայ բաժինը:

2006-էն 2007 պաշտօնավարած է Ժառանգաւորաց վարժարանին մէջ որպէս քարտուղար եւ հսկիչ:

2007-ի Յուլիս 15-ին Քրիստոսի Այլակերպութեան տօնին, ձեռնադրուած է կուսակրօն քահանայ, ձեռամբ օրուան Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Նուրհան Արք. Մանուկեանի:

2008-2019 տարիներուն եղած է Ս. Յարութեան տաճարի փոխտեսուչ: Նոյն տարիներուն համատեղութեամբ եղած է Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ տեսուչ՝ ի նոր Երուսաղէմ:

2006-2008 տարիներուն Ժառանգաւորաց եւ Սրբոց Թարգմանչաց վարժարաններու մէջ դասաւանդած է Քրիստոնէական, Հին եւ Նոր կտակարան առարկաները:

2016-2019 տարիներուն եղած է Համբարձման լերան տեսուչ:

2020-ի Սեպտեմբեր 25-էն ցայսօր Սուրբ Աթոռոյս Աւագ Թարգմանն է:

2023-ի Մարտ 8-ին, Ս. Աթոռոյս Միաբանական Ընդհանուր Ժողովին կողմէ ընտրուած է որպէս Տնօրէն Ժողովի անդամ:

2023-ի Յուլիս 21-ին, ստացաւ Մասնաւոր Վարդապետութեան չորս աստիճաններ, ձեռամբ՝ Ամեն. Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ



ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Տ. ՏԻՐԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՅԱԿՈԲԵԱՆԻ

Աւագանի անունով Արտակ, ծնած է 4 Փետրուար, 1983-ին էջմիածնի շրջանի Ոսկեհատ գիւղին մէջ: Նախնական կրթութիւնը ստացած է գիւղի Միջնակարգ դպրոցին մէջ:

1999-ին ընդունուած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Ժառանգաւորաց Վարժարան, ապա Ընծայարան:

2004-ի Հոկտեմբեր 22-ին, ձեռամբ երջանկայիշատակ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի ձեռնադրուած է Սարկաւազ:

2011-ի Մարտ 3-ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ՝ ձեռամբ օրուան Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Նուրհան Արք. Մանուկեանի՝ վերակոչուելով Տ. Տիրան Աբեղայ:

2008-ին աւարտած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Ընծայարանը:

2008-2009 ուս. տարին Ժառանգաւորաց վարժարանի մէջ դասաւանդած է Քրիստոնէական եւ Նոր կտակարան առարկաները:

2014-2015 տարիներուն ուսանած եւ աւարտած է Երուսաղէմի Եբրայական Համալսարանի նախապատրաստական բաժինը:

2010-2014 եղած է Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի քարտուղար եւ վիզաներու եւ վաւերագրերու գրասենեակի վարիչ:

2014-2019, ապա 2022-էն ցայսօր Տեսուչն է Յոպպէի Սբ. Նիկողայոսի վանքի եւ Ռամլէի Սբ. Գէորգայ վանքի:

2018-2021 տարիներուն ուսանած եւ աւարտած է Երեւանի Պետական Համալսարանի Պատմութեան ֆակուլտետը՝ ստանալով մագիստրոսի կոչում:

2019-ին Սփիւռք-Արցախ կապերու մէջ ունեցած ներդրումի համար արժանացած է Արցախի Հանրապետութեան Պետական Նախարարի «Ոսկէ Մետալ»-ին:

2023-ի Յուլիս 21-ին, ստացաւ Մասնաւոր Վարդապետութեան չորս աստիճաններ, ձեռամբ՝ Ամեն. Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ**ԱՅԼԵՒԱՅԼՔ****ԻՍՐԱՅԷԼԻ ՓԵԹԱԽ ԹԻՔՈՒԱ ՔԱՂԱՔԻՆ ՄԷՋ ԲԱՅՈՒԵՑԱԻ
ՇԱՌԼ ԱԶՆԱԴՈՒՐԻ ԱՆՈՒՄՆ ՊԱՐՏԷՋ**

2 Ապրիլ 2023-ին, երեկոյեան ժամը 5-ին, Իսրայէլի Փեթախ Թիքուա քաղաքի Հանրային պարտէզը պաշտօնապէս վերանուանուեցաւ Քրանսահայ աշխարհահռչակ շանսոնիյէ Շառլ Ազնաւուրի անունով:

Հանրային պարտէզը Շառլ Ազնաւուրի անունով վերանուանելու որոշումը միաձայն ընդունուած է Փեթախ Թիքուայի Քաղաքային խորհուրդին կողմէ՝ քաղաքապետ Ռամի Գրինպէրկի գլխաւորութեամբ:

Բացման արարողութեան Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցան Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Աբղ. Գոգչեան եւ Սուրբ Աթոռոյս Աւագ Թարգման՝ Հոգեշնորհ Տ. Վազգէն Աբղ. Ալէքեան: Բացման արարողութեանը ներկայ էին նաեւ Եաֆայի եւ շրջակայից հոգեւոր հովիւ՝ Հոգեշնորհ Տ. Տիրան Աբղ. Յակոբեան եւ Հայֆայի Հայոց հոգեւոր հովիւ՝ Արժանապատիւ Տ. Տիրայր Քհնյ Յովակիմեան եւ Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Տիար Արման Յակոբեան:

Բացման արարողութեան ընթացքին Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Աբղ. Գոգչեան փոխանցեց Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի ողջոյնի խօսքն ու շնորհակալիքը՝ ուղղուած Փեթախ Թիքուայի Քաղաքային խորհուրդին, քաղաքապետ Տիար Ռամի Գրինպէրկին եւ ներկաներուն:

Բացման արարողութեան ընթացքին հնչեցին նաեւ մեծն Շանսոնիյէ Շառլ Ազնաւուրի Քրանսերէն երգերը՝ Տիար Աշոտ Գասպարեանի կատարմամբ, որուն սաքսոֆօնով կը նուագակցէր Տիար Շայ Պերկովիչ:

Յուշաքարին վրայ գրուած է հետեւեալը.

«Շառլ Ազնաւուր

(1924-2018)

Երգիչ, երգահան, դերասան, Քրանսացի, համաշխարհային շանսոնիյէ, որ կեանքը նուիրած է իր ծննդավայր Հայաստանին եւ պսակուած Ազգային հերոսի կոչումով: Երկրորդ Համաշխարհային պատերազմի ընթացքին Ազնաւուրեան ընտանիք յաջողած է փրկել տասնեակ հրեայ ընտանիքներ բնաջնջումէ»:

**ԱԽԱԳ ՇԱՔԹՈՒՄՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ. ԱՌԺԱՄԵԱՅ ՅՈՒՅԱՀԱՆԳԷՍ
ՀԵԼԷՆ ԵՒ ԷՏՈՒԱՐՏ ՄԱՐՏԻԿԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ՄԷՋ**

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Հելէն եւ Էտուարտ Մարտիկեան թանգա-

րանի երկրորդ յարկին մէջ Սուրբ Աթոռոյս Ձեռագրատունը Ապրիլ 25-29 բացած էր «Աւագ Շաբթուան Խորհուրդը» խորագիրը կրող մանրանկարներու առժամեայ ցուցահանդէս: Յուցանմուշները Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի Գանձատան եւ Սուրբ Թէոդորոս Ձեռագրատան հաւաքածոներէն էին, որոնք կը ներկայացնէին Տիրոջ Երուսաղէմ հրաշափառ մուտքը, չարչարանքները եւ յարուսթիւնը:

ՅԻՇԱՏԱԿ ՆԱՀԱՏԱԿԱՅ ՄԵՐՈՅ, ՈՐՔ ԿԱՏԱՐԵՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՍՆ ՀԱԻԱՏՈՅ ԵՒ ՀԱՅՐԵՆԵԱՅ (108-րդ տարեկից)

23 Ապրիլ, 2023-ին, Երեկոյեան ժամը 5:30-ին, տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան 108-րդ տարեկիցին նուիրուած ջահերով երթ Սբ. Յակոբեանց Մայր տաճարէն դէպի Նոր Երուսաղէմի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի: Երթին մասնակից էին թէ օտարներ եւ թէ Հայեր, ովքեր պաստառներով եւ դրօշակներով քալեցին դէպի Սբ. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, ուր տեղի ունեցաւ կարճ աղօթք: Ապա երթը շարունակուեցաւ դէպի Հայոց ցեղասպանութեան յուշարձան, ուր տեղի ունեցաւ մոմավառութիւն:

24 Ապրիլ, 2023-ին, Հայոց ցեղասպանութեան վասն հաւատոյ եւ հայրենեաց նահատակաց տօնին, առաւօտեան ժամը 7-ին, Սբ. Յակոբեանց Մայր տաճարին մէջ կատարուեցան Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւններ, ապա Աւագ Սեղանին վերայ պատարագեց եւ քարոզեց Հոգեշնորհ Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան: Յաւարտ Սբ. Պատարագի, հոգեւորականաց դասը եւ ժառանգաւոր սաներ թափօրով եւ շարականի երգեցողութեամբ քալեցին դէպի Հայոց ցեղասպանութեան յուշարձան, ուր տեղի ունեցաւ Բարեխօսութեան կարգ, որմէ յետոյ Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեան Սբ. Աթոռոյս անունով ծաղկեպսակ մը զետեղեց յուշարձանին, ապա յաջորդաբար Իսրայէլի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Տիար Արման Յակոբեանը, Իսրայէլի եւ Երուսաղէմի մէջ գործող հայ միութիւններու ներկայացուցիչները եւս իրենց միութիւններու կողմէ ծաղկեպսակներ զետեղեցին յուշարձանին:

Նոյն օրը, Երեկոյեան ժամը 7-ին, նախագահութեամբ Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեան Սրբազան Հօր, եւ կազմակերպութեամբ Սաղիմահայ Միացեալ Յանձնախումբի Ժառանգաւորաց վարժարանի մեծ սրահին մէջ տեղի ունեցաւ յուշահանդէս: Բացման խօսքը կատարեց Սբ. Աթոռոյս Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Աբղ. Գոգչեան: Ապա Ժառանգաւորաց եւ Թարգմանչաց վարժարաններու սաները հանդէս եկան խմբերգերով ու ասմունքներով:

Յուշ-Երեկոն իր լրումին հասաւ Լուսարարապետ Սրբազան Հօր փակման աղօթքով:

ԱՐՅԱԽԵԱՆ 44-ՕՐԵԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՅՔԻՆ ՎԻՐԱԽՈՐՈՒԱԾ ՀԵՐՈՍ ԶԻՆՈՒՈՐՆԵՐՈՒ ԶՈՐՐՈՐԴ ԽՈՒՄՔԻՆ ԱՅՅԸ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

21 Ապրիլ, 2023-ին, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան հրաւերով եւ Հայաս-

տանի Հանրապետության Ազգային ժողովի պաշտպանության եւ անվտանգության հարցերու մշտական յանձնաժողովի եւ Պաշտպանության Նախարարության համագործակցությամբ, Արցախեան 44-օրեայ պատերազմի ընթացքին, հայրենիքի պաշտպանության սուրբ գործը կատարելիս վիրավորուած զինուորներու չորրորդ խումբը ժամանեց Սուրբ Երկիր: Ուխտագնացության այս խումբին մէջ ներգրաւուած էին Հայաստանի տարբեր մարզերու մէջ ապրող վիրավորում ունեցող զինուորներ:

Շաբաթ, 22 Ապրիլ, 2023-ի առաւօտեան, հերոս զինուորները ուղեկցությամբ գընդերէց՝ Արժ. Տ. Պսակ Քհնյ Մկրտչեանի, Ազգային ժողովի պաշտպանության եւ անվտանգության հարցերու մշտական յանձնաժողովի փորձագէտ՝ Աննա Եարմալոյեանի, պատերազմի բովով անցած բժիշկ՝ Տիար Աշոտ Գաբրիէլեանի այցելեցին Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանին՝ ստանալու Նորին Ամենապատուության օրհնութիւնը:

Ուխտագնացության սոյն ծրագրի կազմակերպչական աշխատանքները համակարգած է Ազգային ժողովի պաշտպանության եւ անվտանգության հարցերու մշտական յանձնաժողովի փորձագէտ՝ Աննա Եարմալոյեան, իսկ ծրագրի իրականացման բարերարն է գիւմրեցի Բալասանեան ընտանիք:

ԶԱՏԿԱԿԱՆ ՏՕՆԵՐՈՒ ԱՌԻԹՈՎ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ԱՅՅԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

3 Մայիս, 2023-ին, Զատիկական տօներու առիթով Երուսաղէմի քաղաքապետ Տիար Մոշէ Լէոն այցելեց Հայոց Պատրիարքարան՝ հանդիպելու եւ շնորհաւորելու քրիստոնեայ համայնքներու հոգեւոր պետերուն:

Քաղաքապետի ժամանումէն առաջ Պատրիարքարանի դահլիճին մէջ հաւաքուած էին Սուրբ Երկրի հոգեւոր պետերը՝ իրենց միաբաններով ու ներկայացուցիչներով:

Ժամը 13:45-ին, քաղաքապետ Տիար՝ Մոշէ Լէոն վանքիս Մայր դրան առջեւ դիմաւորուեցաւ Սուրբ Աթոռոյս Աւագ Թարգման՝ Հոգշ. Տ. Վազգէն Աբղ. Ալէքեանի եւ Դիւանապետ՝ Հոգշ. Տ. Աղան Աբղ. Գոգշեանի կողմէ եւ առաջնորդուեցաւ դէպի Պատրիարքարանի դահլիճ:

Յերեկոյթի բացման խօսքը կատարեց Դիւանապետ՝ Հոգշ. Տ. Աղան Աբղ. Գոգշեան, ապա հրաւիրեց Երուսաղէմի քաղաքապետ Տիար Մոշէ Լէոնը՝ կատարելու իր շնորհաւորական ուղերձը: Քաղաքապետի խօսքէն ետք, իրենց ողջոյնի խօսքերով յաջորդաբար հանդէս եկան Երուսաղէմի Յունաց Պատրիարքարանի ներկայացուցիչ՝ Գերշ. Տ. Արիստարքոս Արքեպս., Լատինաց Պատրիարք՝ Ամեն. Տ. Փիերպատիսթա Արքեպս. Փիցապալա, Սուրբ Երկրի Քիւսթոտ՝ Հայր Ֆրանչեսկո Փաթոն եւ Հայոց Պատրիարք՝ Ամեն. Տ. Նուրհան Արքեպս. Մանուկեան:

Յերեկոյթի ողջ ընթացքին Հոգեւոր պետերու ուղերձները կ'ընդմիջէին Ժառանգաւորաց վարժարանի սաները՝ իրենց հոգեւոր երգերու գեղեցիկ կատարումներով:

Հանդիպման վերջաւորութեան Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամեն. Տ. Նուրհան Արքեպս. Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրը Երուսաղէմի քաղաքապետ՝ Տիար

Մոշէ Լէոնի նուիրեց Երուսաղէմի մէջ յայտնի Հայկական յախճապակեայ գեղեցիկ յուշանուէր-նուռ մը:

ԱՆՏԻՈՔԻ ԵՒ ԱՄՔՈՂՉ ԱՐԵՒԵԼՔԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՄՈՒՏՔԸ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐ

4 Մայիս, 2023-ին, Անտիոքի եւ ամբողջ Արեւելքի Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Մոր Իգնատիոս Աֆրեմ II այցելեց Սուրբ Երկիր, ապա կատարեց իր առաջին պաշտօնական մուտքը Սբ. Յարութեան տաճար:

Նորին Ամենապատուութիւնը դիմաւորուեցաւ Երուսաղէմի Հին քաղաքի՝ Նաֆայի դարպասին առջեւ, եւ Սուրբ Երկրի քրիստոնեայ միւս յարանուանութեանց ներկայացուցիչներու ուղեկցութեամբ առաջնորդուեցաւ դէպի Սբ. Յարութեան տաճար, ուր դիմաւորուեցաւ նաեւ Սբ. Յարութեան տաճարի իրաւատէր երեք համայնքներու տեսուչներու կողմէ:

Քրիստոսի Սբ. Գերեզմանի այցելութենէն ետք, Ամենապատիւ Տ. Մոր Իգնատիոս Աֆրեմ II Պատրիարք Հայրը պատուուեցաւ Հայոց տեսչարանին մէջ, ուր ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Սբ. Յարութեան տաճարի Հայոց տեսուչը՝ Հոգեշնորհ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան, ապա Նորին Ամենապատուութիւնը իր շնորհակալական խօսքն ըսաւ զինքը դիմաւորող իրաւատէր երեք համայնքներու ներկայացուցիչներուն:

Սոյն արարողութեանց Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գրտնուեցան Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեան, Սբ. Յարութեան տաճարի տեսուչ՝ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան, Սբ. Աթոռոյս Աւագ Թարգման՝ Տ. Վազգէն Աբղ. Ալէքեան եւ Դիւանապետ՝ Տ. Աղան Աբղ. Գոգչեան:

ԱՆՏԻՈՔԻ ԵՒ ԱՄՔՈՂՉ ԱՐԵՒԵԼՔԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՄՈՒՏՔԸ ԲԵԹՂԵՀԷՄԻ ՍԲ. ԾՆՆԴԵԱՆ ՏԱՃԱՐ

7 Մայիս, 2023-ին, Անտիոքի եւ ամբողջ Արեւելքի Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Մոր Իգնատիոս Աֆրեմ II կատարեց իր առաջին պաշտօնական մուտքը Բեթղեհէմի Սբ. Ծննդեան տաճար:

Նորին Ամենապատուութիւնը Բեթղեհէմի Սբ. Ծննդեան հրապարակին վրայ դիմաւորուեցաւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեանի, Աւագ Թարգման՝ Հոգեշնորհ Տ. Վազգէն Աբղ. Ալէքեանի եւ Դիւանապետ՝ Հոգեշնորհ Տ. Աղան Աբղ. Գոգչեանի կողմէ: Բեթղեհէմի Սբ. Ծննդեան հրապարակին վրայ Նորին Ամենապատուութիւնը դիմաւորելու եկած էին նաեւ Պաղեստինի վարչապետ՝ Վսեմաշուք Տիար Մոհամմատ Շտայէհ, նահանգապետ՝ Տիար Քեամալ Ահմատ Հասան Ամիդ, Բեթղեհէմի քաղաքապետ՝ Տիար Հաննա Հանանիա եւ Պաղեստինեան կառավարութեան այլ ներկայացուցիչներ, որոնց ուղեկցութեամբ առաջնորդուեցաւ դէպի Սբ. Ծննդեան տաճար:

Տաճարի մուտքին Լուսարարապետ Սրբազան Հայրը Պատրիարք Սրբազան Հօր ներկայացուց զինքը դիմաւորող, Սբ. Ծննդեան տաճարի իրաւատէր երեք համայնքներու տեսուչները: Ապա Ամենապատիւ Տ. Մոր Իգնատիոս Աֆրեմ II Պատրիարք Սրբազան Հայրը բարձրացաւ Սբ. Ծննդեան տաճարի Հայկական վանքը, ուր ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Սբ. Ծննդեան տաճարի Հայոց տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Ասպետ Ծ. Վրդ. Պալեան, Պաղեստինի վարչապետ՝ Վսեմաշուք Տիար Մոհամմատ Շտայէհ, ապա Նորին Ամենապատուութիւնն իր շնորհակալական խօսքն ըսաւ զինքը դիմաւորող իրաւատէր երեք համայնքներու ներկայացուցիչներուն եւ պետական ու կառավարական մարդոց:

Հանդիպումէն ետք, Հայոց ուղեկցութեամբ Նորին Ամենապատուութիւն Տ. Մոր Իգնատիոս Աֆրեմ II Պատրիարք Սրբազան Հայրը առաջնորդուեցաւ Սբ. Ծննդեան տաճար, ուր Հայոց բաժնի Սբ. Թլփատութեան խորանին առջեւ տեղի ունեցաւ կարճ աղօթք մը, ապա Պատրիարք Սրբազան Հայրն իր միաբաններով եւ դարձեալ Հայոց ուղեկցութեամբ իջաւ Ս. Այր, ուր Քրիստոսի Սբ. Ծննդեան վայրին երկրպագելէ եւ դարձեալ կարճ աղօթք մը ընելէ ետք Նորին Ամենապատուութիւն Տ. Մոր Իգնատիոս Աֆրեմ II Պատրիարք Սրբազան Հայրն իր միաբաններով մեկնեցաւ Սբ. Ծննդեան տաճարէն:

ԱՆՏԻՈՔԻ ԵՒ ԱՄԲՈՂՋ ԱՐԵՒԵԼՔԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՅՅՐ ՀԱՅՈՅ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

8 Մայիս, 2023-ին, Անտիոքի եւ ամբողջ Արեւելքի Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Մոր Իգնատիոս Աֆրեմ II իր եպիսկոպոսներով այցելեց Հայոց Պատրիարքարան:

Պատրիարքարանի կամարին առջեւ Նորին Ամենապատուութիւնը դիմաւորուեցաւ Սուրբ Աթոռոյս Աւագ Թարգման՝ Տ. Վազգէն Աբղ. Ալէքեանի եւ Դիւանապետ՝ Տ. Աղան Աբղ. Գոգչեանի կողմէ եւ առաջնորդուեցաւ դէպի վանքին Մայր դուռը, ուր Լուսարարապետ Սրբազան Հայրը դիմաւորեց եւ ողջագուրուեցաւ Պատրիարք Սրբազան Հօր հետ, զոյգ Սարկաւազները վարդաշուր ցօղեցին Պատրիարք Սրբազան Հօր ձեռքերուն եւ առաջնորդեցին դէպի Պատրիարքարանի գաւիթ: Ապա Սրբոց Յակոբեանց Միաբանութեան ուղեկցութեամբ Նորին Ամենապատուութիւնը մուտք գործեց Սրբոց Յակոբեանց Մայր տաճար, եւ Սբ. Գլխադրի սրբավայրին իր ուխտն ու երկրպագութիւնն ընելէ ետք կատարուեցաւ կարճ աղօթք մը, որմէ յետոյ Նորին Ամենապատուութիւնն առաջնորդուեցաւ Աւագ Խորանին առջեւ եւ հոն եւս կատարուեցաւ կարճ աղօթք մը, ապա Մայր տաճարի մասին կարճ բացատրութիւն մը տրուեցաւ Նորին Ամենապատուութեան:

Մայր տաճարէն Ամենապատիւ Տ. Մոր Իգնատիոս Աֆրեմ II Սրբոց Յակոբեանց Միաբանութեան թափօրով առաջնորդուեցաւ Պատրիարքարան, ուր դիմաւորուեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի կողմէ:

Սուրբ Աթոռոյս Գահակալը ողջունեց Անտիոքի Պատրիարքը եւ իր խօսքին մէջ ըսաւ. «Հայերը եւ Ասորիները մինչ օրս եղբայրաբար կը ծառայեն Հայաստանի մարտադաշտերու մէջ: Եւ այդպիսով, մեր ժողովուրդի եւ եկեղեցիներու միջեւ այս եղբայրութիւնն ու փոխադարձ յարգանքը սոսկ հոգեւոր կապ չէ, այլ նաեւ երկրային՝ ինչը կը փաստուի գործերով եւ հաւատքով»: Ապա Նորին Ամենապատուութիւնն Տ. Մոր Իգ-

նատիուս Աֆրեմ II իր շնորհակալական խօսքն ըսաւ Սուրբ Աթոռոյս Գահակալին եւ իր ուրախութիւնը յայտնեց Սուրբ Երկրի մէջ Հայ եւ Ասորի եկեղեցիներու միջեւ տիրող բարիդրացիական յարաբերութիւններու եւ այս այցով այդ աւելի ամրապնդելու համար: Նորին Ամենապատուութիւնը շնորհալուծիւն յայտնեց միաբան եղբայրներուն եւ մասնաւորապէս Սուրբ Աթոռոյս Դիւանապետ՝ Տ. Աղան Աբղ. Գոգչեանին, այս աւելութեան եւ Սրբատեղեաց մէջ իր կատարած պաշտօնական մուտքերը համաձայն Status Quo-ի խաղաղ եւ անխոչընդոտ կազմակերպելու համար:

Հանդիպման վերջաւորութեան, խորհրդանշական նուէրներ փոխանակուեցան զոյգ Պատրիարքներու միջեւ: Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեան շնորհաւորեց նաեւ Երուսաղէմի Ասորի եպիսկոպոս Գերշ. Տ. Անթիմոս Ճաք Յակոբը իր գահակալութեան առիթով եւ անոր նուիրեց ականակոռ պանակէ եւ խաչ:

Հիւրասիրութենէ ետք Նորին Ամենապատուութիւն Տ. Մոր Իգնատիուս Աֆրեմ II Սրբոց Յակոբեանց Միաբանութեան ուղեկցութեամբ մեկնեցաւ Պատրիարքարանէն:

ՎԵՐԱԾՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՅԻ՝

ՍՈՒՐԲ ՀՌԻՓՍԻՄԷԻ ՄԱՏՐԱՆ

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ ԽՈՐԱՆԻՆ ԵՒ ՊԱՏԿԵՐԻՆ

27 Մայիս, 2023-ին, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը հանդիսապետութեամբ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեանի մեկնեցաւ Սբ. Հրեշտակապետաց եկեղեցի, ուր տեղի ունեցաւ Երեկոյեան Ժամերգութիւն եւ Երկրորդ Ծաղկազարդի նախատօնակը:

Յետ Երեկոյեան Ժամերգութեան, Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեանի եւ առընթերակայ Հայր Սուրբերու՝ Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Յովհաննիսեանի եւ Տ. Ներսէս Աբղ. Ալոյեանի զգեստաւորուելէ ետք, նախ ջուրով ապա գինիով լուացուեցաւ Սբ. Հռիփսիմէի մատրան վերանորոգեալ խորանը, ապա Լուսարարապետ Սրբազան Հայրը կատարեց խորանի վերածման արարողութիւնը:

Իսկ Սբ. Հռիփսիմեանց կոյսերու տօնին ընդառաջ 11 Յունիս, 2023-ին, ձեռամբ Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեանի օծուեցաւ Սբ. Հռիփսիմէի մատրան խորանի պատկերը:

ԺԱՌԱՆԳԱԽՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ

ՇՐՋԱՆԱԽԱՐՏԻՅ ՀԱՆԳԷՍ

13 Յունիս, 2023-ին, Երեկոյեան Ժամը 7:00-ին, նախագահութեամբ Ս. Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր, տեղի ունեցաւ Ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի Ամաւերջեան հանդէսը:

Միաբանութիւնը դիմաւորուեցաւ ժառանգաւորաց վարժարանի օրհներգ «Սիրտ ի սիրտ» երգի հնչիւններու ներքոյ, ապա յոտնկայս երգուեցաւ Հայաստանի Հանրապետութեան օրհներգը:

Հանդիսութեան բացման խօսքը վստահուած էր վարժարանի փոխտեսուչ՝ Բարեշնորհ Աշոտ Սարկաւազ Ղազարեանին: Երեկոյի ողջ ընթացքին Ընծայարանի եւ ժառանգաւորաց վարժարանի շրջանաւարտներ եւ ժառանգաւոր սաներ հանդէս եկան իրենց հայերէն, անգլերէն եւ եբրայերէն ուղերձներով, ասմունքներով ու խմբերգերով, ինչպէս նաեւ դաշնամուրի եւ թառի գեղեցիկ կատարումներով:

Հանդիսութեան վերջաւորութեան վարժարանի Տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան ներկայացուց ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի 2022-2023 ուս. տարուայ տեղեկագիրը: Ապա հրաւիրեց Պատրիարք Սրբազան Հայրը, որ պէսգի յանձնէ Շրջանաւարտներու վկայականները ինչպէս նաեւ վարժարանի եւ Ընծայարանի առաջադէմ ուսանողներու մրցանակները: Վկայականներու եւ մրցանակներու բաշխումէն յետոյ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը շնորհաւորեց շրջանաւարտները եւ իր պատգամը տուաւ անոնց, ապա երեկոն փակուեցաւ Ս. Աթոռոյս օրհներգով եւ «Պահպանիչ»-ով, որմէ յետոյ ներկաները պատուուեցան հիւրասիրութեամբ:

Ընծայարանի շրջանաւարտներն էին. Բարեշնորհ Գրիգոր Սարկաւազ Թաքուշեան եւ Բարեշնորհ Յովհաննէս Սարկաւազ Խուդավերդեան:

Իսկ ժառանգաւորաց վարժարանի շրջանաւարտներն էին. Բարեկրօն դպիրներ՝ Զօրի Կարապետեան, Էրիկ Պօղոսեան, Հրանդ Բադալեան, Մուշեղ Սարգսեան, Սպարտակ Նազարէթեան եւ Սուրէն Աւետիսեան:

ՍՐԲՈՅ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ ՀԱՆԳԷՍ

10 Յունիս, 2023-ին, երեկոյեան ժամը 5:00-ին, Ս. Թարգմանչաց վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Սրբոց Թարգմանչաց երկրորդական բաժնի 65-րդ Շրջանաւարտից հանդէսը՝ նախագահութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեանի եւ ի ներկայութեան Հոգեշնորհ Հայրերու, ծնողներու եւ հանդիսականներու հոծ բազմութեան:

Հանդէսին յայտագիրը կը բաղկանար երկու մասերէ: Առաջինը սկսաւ Հայաստանի Հանրապետութեան օրհներգի եւ Թարգմանչաց շարականի («Որք զարդարեցին») երգեցողութեամբ, զոր կատարեցին Շրջանաւարտները:

Երեկոյի ընթացքին շրջանաւարտ սաները հանդէս եկան իրենց սրտի շնորհակալական խօսքերով, ապա վարժարանի փոխ-տեսուչ՝ Տիար Միհրան Տէր Մաթոսեան ներկայացուց 2022-2023 ուսումնական տարուայ կրթական տեղեկագիրը:

Հանդիսութեան վերջաւորութեան Սրբոց Թարգմանչաց վարժարանի Տեսուչ՝ Արժ. Տ. Արտէն Քհնյ Աբրահամեան շնորհակալական խօսքեր ըսաւ բոլոր ուսուցիչներուն, աշակերտներուն, ծնողներուն, եւ յատկապէս Լուսարարապետ Սրբազան Հօր՝ իր հայրական վերաբերմունքին համար: Ինչպէս նաեւ վարժարանի ուսուցիչներէն Տիար

Սեւան Տէյիրմենճեանին շնորհակալական յախճապակեայ Յուշագիր մը յանձնեց Սբ. Թարգմանչաց վարժարանին մատուցած իր ծառայութեան համար: Ապա Լուսարարապետ Սրբազան Հայրը, յանձնեց շրջանաւարտներու վկայականներն ու առաջադեմ աշակերտներու մրցանակները:

Մրցանակներու բաշխումէն յետոյ Լուսարարապետ Սրբազան Հայրը կատարեց փակման խօսքը եւ իր պատգամը փոխանցեց շրջանաւարտներուն: Երեկոն փակուեցաւ «Պահպանիչ»-ով եւ «Հայր մեր»-ով:

Շրջանաւարտներն էին. Լիանա Տիգալիքեան, Զաւէն Թադէոսեան, Լուսիանա Հէքիմեան, Կալինա Պօյաճեան, Սեւան Սահակեան, Կալինա Շօհմէլեան, Մարիա Սահակեան, Վրէժ Պետրոսեան:

ԿԻՍԱՍԱՐԿԱԻԱԳԱԿԱՆ ՁԵՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

17 Յունիս, 2023-ին, յետ Երեկոյեան ժամերգութեան եւ նախատօնակի, Սրբոց Յակոբեանց Մայր տաճարին մէջ, Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեան Սրբազան Հօր ձեռամբ կատարուեցաւ Սարկաւագական կոչման արարողութիւնը՝ Սուրբ Աթոռոյս Ուրարակիրներէն Տրց. Իվան Ադամեանի, Տրց. Սարգիս Գինոսեանի եւ Սբ. Աստուածածնայ տաճարի ծառայող միաբաններէն Տրց. Էրիկ Սարգարեանի:

Ընծայեալները ծնրադիր յառաջացան Դասի մուտքէն եւ Ձեռնադրիչ Սրբազան Հօրմէն ստացան Կիսասարկաւագութեան աստիճան՝ խարտաւիլակութեամբ Հոգշ. Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեանի եւ առընթերակայութեամբ՝ Հոգշ. Տ. Կորիւն Ծ. Վրդ. Բաղդասարեանի: Ձեռնադրութենէն ետք, ընծայեալները կարմիր բազկուրարներ իրենց թեւերուն մեկնեցան Ս. Յարութեան տաճար՝ մասնակցելու Տնօրինական Ս. Տեղեաց թափօրին:

ՍԱՐԿԱԻԱԳԱԿԱՆ ՁԵՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

18 Յունիս, 2023-ին, Կաթողիկէ Եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի տօնին, առաւօտեան ժամը 7-ին, Սրբոց Յակոբեանց Մայր տաճարին մէջ կատարուեցան Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւններ, ապա հանդիսապետութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեանի՝ «Անդաստան»։ Տօնի սուրբ եւ անմահ պատարագը Մայր տաճարի Աւագ խորանին վրայ մատուցեց Հոգշ. Տ. Թէոդորոս Ծ. Վրդ. Զաքարեան: «Հայր մեր»-էն առաջ կատարուեցաւ «Հայրապետական մաղթանք» վասն Ս. Էջմիածնի:

Պատարագի սկիզբն ազդարարող կոչնակի հարուածներու եւ Կոմիտասեան եղանակով «Խորհուրդ խորին» շարականին հետ սկսաւ Պատարագը եւ շարունակուեցաւ մինչեւ Ճաշու գրգին ընթերցումը, ապա Սուրբ Աթոռոյս երկու Կիսասարկաւագներ Սարկաւագական ձեռնադրութեան շնորհին արժանացան Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերշ. Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեան Սրբազան Հօր ձեռամբ: Որպէս խարտաւիլակ Հոգշ. Տ. Կորիւն Ծ. Վրդ. Բաղդասարեան ընծայեալները առաջնորդեց ձեռնադրիչ Սրբազան Հօր՝ իրեն առընթերակայ ունենալով Հոգշ. Տ. Վազգէն Աբղ. Ալէքեանը:

Ձեռնադրութենէ առաջ ընծայեալները ներկաներուն առջեւ կատարեցին իրենց ուխտը. «Աստուածային եւ երկնային շնորհ, որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ, կոչէ զԻվան եւ զՍարգիս ի կիսասարկաւագութենէ ի սարկաւագութիւն, սրբոյ եկեղեցւոյ ի սպասաւորութիւն ըստ վկայութեան անձանց իւրեանց եւ ամենայն ժողովրդեանս»:

Ուխտէն յետոյ ընծայեալները ստացան ուրար՝ կրելու Տիրոջ քաղցր լուծը իրենց ուսերուն, Աւետարան՝ քարոզելու Տերունական ճշմարտութիւնները, Բուրվառ՝ հրաման խնկարկելու Ս. Եկեղեցւոյ մէջ խոնկի անոյշ բոյրով լեցնելու տաճարը, ապագային դառնալու մէջ-մէկ ծխացող կնդրուկներ հայ եկեղեցւոյ տաճարէն ներս:

Ձեռնադրութենէն անմիջապէս յետոյ նորընծայ՝ Բարեշնորհ Իվան Սարկաւագ Աղամեան եւ Սարգիս Սարկաւագ Գինոսեան կատարեցին սուրբ պատարագի սպասարկութիւնը՝ մին կարգաց աւետարանը, միւսը՝ վերաբերումը մատուցեց հոգեշնորհ պատարագիչին:

Այս ուրախալի առիթով, նորընծայ սարկաւագներուն, որոնցմով Սուրբ Աթոռոյս սարկաւագներուն թիւը բարձրացաւ, սրտագինս կ'ըսենք.

«Բարեաւ զնացէք ընդ այս ճանապարհ...»:

ՈՒՐԱՐԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ

1 Յուլիս, 2023-ին, յետ Երեկոյեան ժամերգութեան, Սրբոյ Յակոբեանց Մայր տաճարին մէջ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպս. Ղարիպեան Ուրար կրելու իրաւունք շնորհեց Ա. Ընծայարանի ուսանողներ՝ Էդգար Բաղդասարեանի, Խաչիկ Սարգսեանի, Յարութիւն Անդրիասեանի, Յովհաննէս Խումարեանի, Նուէր Գեղամեանի եւ Ռուբէն Յակոբեանի:

Թող Աստուած անխախտ պահէ անոնց ուխտը, որպէսզի Իր այգիին նուիրուին նոր եւ եռանդուն մշակներ:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՍ ԱՔԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

